

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«08» հոկտեմբեր 2019թ.

No 2868 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ
2806-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՁԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԻՊԻ ԵՎ ՍՈՒՐ ՇՆՉԱՌԱԿԱՆ
ՎԱՐԱԿՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՀԻՎԱՆԴԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ
ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, ինչպես նաև 2019-2020 թվականների աշնան - ձմռան ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում գրիպի ու սուր շնչառական վարակների, դրանց հիվանդացության բարձրացման և համաճարակի դեպքում անհետաձգելի միջոցառումներ իրականացնելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 2944-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետությունում գրիպի ու սուր

շնչառական վարակների, դրանց հիվանդացության բարձրացման և համաճարակի դեպքում անհետաձգելի միջոցառումներ իրականացնելու, ինչպես նաև համապատասխան տեղեկատվության ներկայացման ձևերը հաստատելու մասին» թիվ 2806-Ա հրամանը:

2. Հաստատել՝

1) «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում սուր շնչառական վարակների արձանագրված դեպքերի վերաբերյալ շաբաթական (օրական) տեղեկատվության ներկայացման ձևը»՝ համաձայն հավելված 1-ի,

2) «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում արձանագրված թոքաբորբերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևը»՝ համաձայն հավելված 2-ի,

3) «Տարրական, միջին, հիմնական, ավագ, միջնակարգ դպրոցների և վարժարանի կրթական ծրագրերի աստիճան ունեցող հանրակրթական, հատուկ, մասնագիտացված հանրակրթական դպրոցներում և նախադպրոցական ուսումնական հաստատություններում սուր շնչառական վարակների վերաբերյալ օրական տեղեկատվության ներկայացման ձևը»՝ համաձայն հավելված 3-ի,

4) «Տարրական, միջին, հիմնական, ավագ, միջնակարգ դպրոցների և վարժարանի կրթական ծրագրերի աստիճան ունեցող հանրակրթական, հատուկ, մասնագիտացված հանրակրթական դպրոցներում և նախադպրոցական ուսումնական հաստատություններում սենքների ջերմաչափման վերաբերյալ օրական տեղեկատվության ներկայացման ձևերը»՝ համաձայն հավելված 4-ի,

5) «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների մանկական, թոքային, սրտաբանական և այլն սուր շնչառական վարակներով, թոքաբորբերով հոսպիտալացված դեպքերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևը»՝ համաձայն հավելված 5-ի,

6) «Շտապ օգնության ծառայության կողմից գրիպի, սուր շնչառական վարակների, թոքաբորբերի, բրոնխիտների, ինչպես նաև դրանց հոսպիտալացված դեպքերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևը»՝ համաձայն հավելված 6-ի:

7) «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (պոլիկլինիկական և ստացիոնար) հակավիրուսային (Օզելտամիվիր) դեղի գույքագրման ձևը»՝ համաձայն հավելված 7-ի:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետարանի առողջապահության, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունների պետերին և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին՝

1) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ապահովել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի N 34-Ն, 2013 թվականի սեպտեմբերի 28-ի N 58-Ն և 2017 թվականի ապրիլի 12-ի N 1252-Ա հրամանների պահանջները,

2) գրիպի և սուր շնչառական վարակներով, հատկապես՝ հիվանդացության բարձրացման, ինչպես նաև համաճարակի ժամանակ ամբուլատոր և ստացիոնար պացիենտներին ցուցաբերել ժամանակին և պատշաճ մասնագիտացված բժշկական օգնություն,

3) սուր շնչառական վարակներով պայմանավորված պացիենտների դիմելիության ժամանակ ապահովել մանրամասն համաճարակաբանական վերհուշ (անամնեզ)՝ ուշադրություն դարձնելով Հայաստանի Հանրապետությունից վերջին 7-14 օրվա ընթացքում բացակայելու հանգամանքին,

4) բոլոր բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (հատկապես մարզային և քաղաքային նշանակության) ընդունարաններին կից ձևավորել մեկուսարաններ՝ գրիպով և սուր շնչառական վարակներով պացիենտներին մեկուսացնելու և համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերելու համար,

5) բոլոր բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (հատկապես մարզային և քաղաքային նշանակության) ընդունարաններին կից ձևավորված մեկուսարաններն ապահովել անհրաժեշտ միջոցներով (դիմակներ, դեղեր, այդ թվում՝ հակավիրուսային և հակամանրէային,

- ախտահանիչ նյութեր) գրիպով և սուր շնչառական վարակներով պացիենտների մեկուսացված բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպելու համար,
- 6) 2019 թվականի նոյեմբերից մինչ 2020 թվականի մայիս ամիսը ներառյալ կազմակերպել աշխատանքներ սուր շնչառական վարակներով, հետգրիպային բարդություններով, ծանր սուր շնչառական վարակներով պացիենտներին առանձին բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ հավասարաչափ ուղղորդելու համար,
- 7) անհրաժեշտության դեպքում կազմակերպել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում լրացուցիչ մահճակալների ծավալումը՝ սուր շնչառական վարակներով, հետգրիպային բարդություններով, ծանր սուր շնչառական վարակներով պացիենտների հոսպիտալացումն իրականացնելու համար,
- 8) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններն ապահովել անհրաժեշտ հակավիրուսային, ախտանշանային բուժման և այլ անհրաժեշտ պատրաստուկներով և ախտահանիչ նյութերով,
- 9) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ապահովել սանիտարահակահամաճարակային ռեժիմի խիստ պահպանումը (ախտահանում, խոնավ մաքրում, մանրէասպան լամպերի օգտագործում, օդափոխում, բուժանձնակազմի կողմից դիմակների օգտագործում և այլն),
- 10) գրիպի համաճարակի կամ սուր շնչառական վարակների աշխուժացման ժամանակահատվածի ողջ ընթացքում ծննդատներում ուժեղացնել հսկողությունը ծննդկանների և նորածինների նկատմամբ (ջերմաչափում, քիթ-ըմպանի զննում և այլն),
- 11) գրիպով և սուր շնչառական վիրուսային վարակներով պացիենտների հայտնաբերման դեպքում ապահովել նրանց մեկուսացումն առանձին հիվանդասենյակներում,
- 12) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում սահմանափակել, իսկ համապատասխան համաճարակային ցուցման դեպքում արգելել այցելուների մուտքը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բաժանմունքներ,

13) շարունակել գրիպի և սուր շնչառական վարակների շաբաթական (օրական) մոնիթորինգը՝ տվյալները հաղորդելով Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կետրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մարզային և Երևան քաղաքի մասնաճյուղեր՝ համաձայն սույն հրամանի հավելված 1-ի, 2-ի, 3-ի,

14) Առողջապահության նախարարության համապատասխան ցուցման դեպքում ապահովել սույն հրամանով հաստատված հավելված 5-ի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի N 34-Ն հրամանի ձև 4-ով սահմանված տեղեկատվության տրամադրումը՝ Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կետրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կենտրոնական ապարատ,

15) ապահովել սույն հրամանի հավելված 6-ով սահմանված տեղեկատվության տրամադրումը՝ Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կետրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կենտրոնական ապարատ:

4. Առաջարկել Երևանի քաղաքապետարանի կրթության, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կրթության, մշակույթի և սպորտի վարչությունների պետերին և նախադպրոցական ուսումնական հաստատությունների, տարրական, միջին, հիմնական, ավագ, միջնակարգ դպրոցների և վարժարանի կրթական ծրագրերի աստիճան ունեցող հանրակրթական, հատուկ, մասնագիտացված հանրակրթական դպրոցների ղեկավարներին՝

1) պարզաբանել աշակերտների բացակայության պատճառները՝ սուր շնչառական վարակներով պացիենտների բացահայտման նպատակով,

2) 2019 թվականի նոյեմբերի 15-ից իրականացնել սուր շնչառական վարակների, սենքերի ջերմային ռեժիմի ամենօրյա մոնիթորինգ և ամփոփ տվյալները հաղորդել Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կետրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության

մարզային և Երևան քաղաքի մասնաճյուղեր՝ համաձայն սույն հրամանի հավելված 3-ի և 4-ի:

5. Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրեն Արտավազդ Վանյանին.

1) գրիպի և սուր շնչառական վարակների նկատմամբ դիտարկումն իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի N 34-Ն հրամանի պահանջների,

2) իրականացնել բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում և առողջ ապրելակերպի քարոզչություն՝ գրիպի և սուր շնչառական վարակների կանխարգելման հարցերի շուրջ, ինչպես նաև ուժեղացնել բնակչության շրջանում բացատրական, բժշկահիգիենիկ գիտելիքների տարածման և քարոզչական աշխատանքը գրիպի և սուր շնչառական վարակների կանխարգելման ուղղությամբ,

3) ձեռնարկել համապատասխան միջոցառումներ (դասախոսություններ, սեմինարներ, քննարկումներ) բժշկական օգնության և սպասարկման առաջնային օղակներում (տեղամասային բժիշկներ, մանկաբույժներ, ընտանեկան բժիշկներ) գրիպով և սուր շնչառական վիրուսային վարակներով պացիենտների վաղ հայտնաբերման, ախտորոշման և վարակի կանխարգելման ուղղությամբ՝ բուժանձնակազմի զգոնությունը բարձրացնելու նպատակով,

4) ամփոփել և վերլուծել գրիպի և սուր շնչական վարակների շաբաթական (օրական) մոնիթորինգի տվյալները և ըստ Հայաստանի Հանրապետության առանձին մարզերի և Երևան քաղաքի վերլուծել (համեմատել նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի, հաշվետու շաբաթվա նախորդ շաբաթվա հետ, բացարձակ թվերով, ցուցանիշներով, հաշվարկել հիվանդացության շեմը)՝ համաձայն սույն հրամանի հավելված 1-ի և 2-ի,

5) ամփոփել և վերլուծել նախադպրոցական ուսումնական հաստատություններում, տարրական, միջին, հիմնական, ավագ, միջնակարգ դպրոցների և վարժարանի կրթական ծրագրերի աստիճան ունեցող հանրակրթական, հատուկ, մասնագիտացված

հանրակրթական դպրոցներում սուր շնչառական վարակների և սենքների ջերմաչափման վերաբերյալ օրական (շաբաթական) տեղեկատվության տվյալները՝ համաձայն սույն հրամանի հավելված 3-ի և 4-ի,

6) ամփոփել և վերլուծել գրիպանման հիվանդությունների և ծանր սուր շնչառական վարակների շաբաթական մոնիթորինգի տվյալները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի ապրիլի 15-ի թիվ 886-Ա և 2018 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 2523-Ա հրամանների և դետքային համաճարակաբանական հսկողության ապահովման ուղղությամբ ներդրված այլ հրամանների պահանջների:

6. Առաջարկել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝

1) գրիպի և սուր շնչառական վարակների նկատմամբ հսկողությունն իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի N 34-Ն հրամանի պահանջների համաձայն:

7. Առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության քաղաքականության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Լուսինե Քոչարյանին ու մոր և մանկան առողջության պահպանման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Նունե Փաշայանին՝

1) Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրամադրված տվյալների հիման վրա ապահովել սուր շնչառական վարակներով, հետգրիպային բարդություններով, ծանր սուր շնչառական վարակներով պացիենտների առանձին բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ հավասարաչափ ուղղորդման աշխատանքներ,

2) անհրաժեշտության դեպքում կազմակերպել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում լրացուցիչ մահճակալների տեղադրումը՝ սուր շնչառական վարակներով, հետգրիպային բարդություններով, ծանր սուր շնչառական վարակներով պացիենտների հոսպիտալացումն իրականացնելու համար:

8. Առողջապահության նախարարության աշխատակազմի դեղորայքային քաղաքանակության և բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ Վարդուհի Գրիգորյանին՝

1) մինչև 2019 թվականի նոյեմբերի առաջին տասնօրյակն ապահովել Հայաստանի Հանրապետության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (պոլիկլինիկական և ստացիոնար) հակավիրուսային (Օզելտամիվիր) դեղի գույքագրում՝ համաձայն սույն հրամանի հավելված 7-ի,

2) Հայաստանի Հանրապետության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (պոլիկլինիկական և ստացիոնար) հակավիրուսային (Օզելտամիվիր) դեղի իրականացված գույքագրման արդյունքների հիման վրա ապահովել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին պահեստավորված հակավիրուսային (Օզելտամիվիր) դեղի բաշխումը՝ սահմանված կարգով:

9. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ և տեղեկատվության անվտանգության ապահովման համար պատասխանատու Լիլիթ Բաբախանյանին՝

1) կազմակերպել զանգվածային լրատվության միջոցներով բնակչության իրազեկումը գրիպով և սուր շնչառական վարակներով համաճարակային իրավիճակի և ձեռնարկվող միջոցառումների մասին:

10. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանին:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված 1

Առողջապահության նախարարի 2019 թվականի

Հոկտեմբերի 08-ի

թիվ N 2868 - Ա հրամանի

Ձև 1

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում սուր շնչառական վարակների արձանագրված դեպքերի վերաբերյալ շաբաթական (օրական) տեղեկատվության ներկայացման

Ընդամենը	Արձանագրվել են սուր շնչառական վարակների դեպքեր											
	այդ թվում՝											
	0-14տ	դրանցից հոսպիտալացված դեպքեր	0-4տ	դրանցից հոսպիտալացված դեպքեր	5-14տ	դրանցից հոսպիտալացված դեպքեր	15-29տ	դրանցից հոսպիտալացված դեպքեր	30-64տ	դրանցից հոսպիտալացված դեպքեր	65տ և ավել	դրանցից հոսպիտալացված դեպքեր
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13

Հավելված 2

Առողջապահության նախարարի 2019 թվականի

Հոկտեմբերի 08-ի

թիվ N 2868 - Ա հրամանի

Ձև 2

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում արձանագրված թոքաբորբերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման

Երևան քաղաքի վարչական շրջաններ / Մարզեր	Թոքաբորբ (բացառությամբ՝ կանգային կամ հիմնական հիվանդության բարդությամբ պայմանավորված)			
	ընդամենը	այդ թվում		
		պատվաստում սեզոնային գրիպի դեմ	շփում թոչնի հետ	վերջին 7-14 օրվա ընթացքում հանրապետությունից բացակայելու փաստ
1	2	3	4	5

Հավելված 3

Առողջապահության նախարարի 2019 թվականի

Հոկտեմբերի 08-ի

թիվ N 2868 - Ա հրամանի

Ձև 3

Տարրական, միջին, հիմնական, ավագ, միջնակարգ դպրոցների և վարժարանի կրթական ծրագրերի աստիճան ունեցող հանրակրթական, հատուկ, մասնագիտացված հանրակրթական դպրոցներում և նախադպրոցական ուսումնական հաստատություններում սուր շնչառական վարակների (ՍՇՎ) վերաբերյալ օրական տեղեկատվության ներկայացման

<i>Հաստատության անվանում և թիվ</i>	<i>Սաների թիվ</i>	<i>Տվյալ օրով փաստացի առկա սաների թիվ</i>	<i>Բացականների թիվ</i>	<i>ՍՇՎ-ով բացակա աշակերտների թիվ</i>	<i>Համաճարակաբանական ֆիլտրման ժամանակ հայտնաբերված հիվանդ երեխաների թիվ</i>	<i>ՍՇՎ-ով հիվանդ և ֆիլտրման ժամանակ հայտնաբերված հիվանդների թիվ</i>
1	2	3	4	5	6	7

Հավելված 4

Առողջապահության նախարարի 2019 թվականի

Հոկտեմբերի 08-ի

թիվ N 2868 - Ա հրամանի

Ձև 4

Տարրական, միջին, հիմնական, ավագ, միջնակարգ դպրոցների և վարժարանի կրթական ծրագրերի աստիճան ունեցող հանրակրթական, հատուկ, մասնագիտացված հանրակրթական դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների սենքերի ջերմաչափման վերաբերյալ օրական տեղեկատվության ներկայացման

N	Հաստատության անվանումը	Ջեռուցման եղանակը	Օդի ջերմաստիճան °C				
			դասասենյակ	խմբասենյակ	ննջասենյակ	միջանցք	սանհանգույց
1	2	3	4	5	6	7	8

Հավելված 5

Առողջապահության նախարարի 2019 թվականի

Հոկտեմբերի 08-ի

թիվ N 2868 - Ա հրամանի

Ձև 5

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների այլ բաժանմունքներում (մանկական, թոքային, սրտաբանական և այլն) սուր շնչառական վարակներով, թոքաբորբերով հոսպիտալացված դեպքերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության անվանում	Նախորդ օրվա ընթացքում հոսպիտալացված դեպքեր				Դուրս գրված դեպքերի թիվ				Նոր ընդունված դեպքերի թիվ				Ներկա պահին առկա դեպքերի թիվ			
	սուր շնչառական վարակներ		թոքաբորբեր		սուր շնչառական վարակներ		թոքաբորբեր		սուր շնչառական վարակներ		թոքաբորբեր		սուր շնչառական վարակներ		թոքաբորբեր	
	ընդամենը	0-18տ	ընդամենը	0-18տ	ընդամենը	0-18տ	ընդամենը	0-18տ	ընդամենը	0-18տ	ընդամենը	0-18տ	ընդամենը	0-18տ	ընդամենը	0-18տ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17

Հավելված 6

Ձև 6

Շտապ օգնության ծառայության կողմից գրիպի, սուր շնչառական վարակների (ՍՇՎ), թոքաբորբերի, բրոնխիտների, ինչպես նաև դրանց հոսպիտալացված դեպքերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման

1	Կանչերի ընդհանուր թիվ	
	մինչև 18 տարեկան	
	18 տարեկանից բարձր	
2	Ընդհանուր կանչերից հոսպիտալացվածների թիվ	
	մինչև 18 տարեկան	
	18 տարեկանից բարձր	
3	Կանչերի ընդհանուր թվից արձանագրվել են	
	ՍՇՎ-ով կանչեր, որից	
	մինչև 18 տարեկան	
	18 տարեկանից բարձր	
	Թոքաբորբով կանչեր, որից	
	մինչև 18 տարեկան	
	18 տարեկանից բարձր	
	Տրախեիտ, բրոնխիտ, լարինգոտրախեիտով կանչեր, որից	

	մինչև 18 տարեկան	
	18 տարեկանից բարձր	
4	ՄՇՎ-ով կանչերից հոսպիտալազացվել են.	
	մինչև 18 տարեկան, այդ թվում՝	
	«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ	
	«Սուրբ Աստվածամայր» ԲԿ	
	«Արաբկիր բժշկական համալիր /Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ»	
	Թիվ 2 համալսարանական կլինիկայի «Մուրացան» ԲԿ	
	«Էրեբունի» ԲԿ	
	«Նորք» ինֆեկցիոն հիվանդանոց	
	Այլ նշել	
	18 տարեկան և բարձր	
5	Թորաբորբով կանչերից հոսպիտալազացվել են.	
	մինչև 18 տարեկան	
	18 տարեկան և բարձր	
6	Լարինգոտրախեիտով կանչերից հոսպիտալազացվել են.	
	մինչև 18 տարեկան	
	18 տարեկան և բարձր	

Հավելված 7

Առողջապահության նախարարի 2019 թվականի

Հոկտեմբերի 08-ի

թիվ N 2868 - Ա հրամանի

Ձև 7

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (պոլիկլինիկական և ստացիոնար)
հակավիրուսային դեղի (Օզելտամիվիր) գույքագրման

N	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության անվանում	Հակավիրուսային դեղի (Օզելտամիվիր) առկա մնացորդ (հաբ), այդ թվում՝		Հակավիրուսային դեղի (Օզելտամիվիր) պահանջ (հաբ)	Նկատառում
		սերիա	ժամկետ		
1	2	3	4	5	6